

Կանոններու եւ աւետարանասկիզբի խորանները նորութիւն չեն պարունակեր: Յովհաննէս քահանայ զանոնք ծաղկած է վարպետօրէն, նուրբ արուեստով ու գեղեցիկ: Սովորական դժաձեւեր է դործածած, իսկ ընտրած գոյները համադրած է շատ մեծ ճաշակով:

Փրինսթընի Համալսարանի հաւաքածոյին թիւ 18 Աւետարանը ներկայացնելու պահուն, աւելորդ չենք նկատեր՝ անգամ մը եւս չետել սոյն Աւետարանի կարեւորութիւնը, մանրանկարչական տեսակէտէն. արդարեւ՝ այս Աւետարանին մանրանկարներուն շնորհիւ է որ կը ծանօթանանք թէ Եկեղեաց զաւառի մէջ, ԺԵ. դարուն, կը դործէր ծաղկող-մանրանկարիչ ու գրիչ ընտիր արուեստագէտ մը, Յովհաննէս քահանայ անունով:

* * *

Մինչ կ'աւարտի սոյն յօդուածը, մեր մտքին առջեւ կը լուսաւորուի դէմքը բազմավաստակ Հ. Մեսրոպ Վրդ. Ճանաչեանի, որ այնքան մեծ խանդավառութեամբ նուիրուեցաւ Ս. Ղազարի Մատենադարանի գրչագիրներու շքեղ ու հնագոյն մանրանկարներու ուսումնասիրութեան, հրատարակելով գեղատիպ ու բացառիկ արժէքով հսկայ հատոր մը, որ ծանօթ է բոլորին:

Սոյն համեստ տողերը՝ որպէս դոյզն ծաղկեփունջ՝ յուզումով ի սրտէ կը նուիրեմ մեծ վաստակաւորի թարմ հողակոյտին, անոր անմոռաց ու պայծառ յիշատակին:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ













